

17. Մանուէլ վարդապետ:
18. Գէորգ վարդապետ:
19. Պետօ վարդապետ:
20. Ղազար վարդապետ Մշի:
21. Յարութիւն վարդապետ Սանդուխտ օղլու:
22. Պետրոս վարդապետ Տիվրիկցի:
23. Յովհաննէս վարդապետ Աղաւնի:

Աստուծոյ զատ չորս ալ սարկաւազ «Թողաւ»:

24. Մարտիրոս, որ սարկաւազ մնաց.
25. Սրկ. Պետրոս Բէրդի օղլու:
26. Սրկ. Պօղոս Ախրդբանն (= Ախրդ գաբուցի):
27. Սրկ. Կարապետ Չիլինկիրբան:

Այս վերջին երեք սարկաւազները Յակոբ (= Նայեան) Պատրիարքէն ձեռնադրուեցան:

Բաւական ստուար խումբ մը վարդապետներու, որոնք, անշուշտ, պէտք եղածին պէս պատաստուելէ ետքը՝ կոչուած են քահանայական աստիճանին եւ վարդապետական աթոռին: Կանխեցի արդէն ըսել թէ դժբախտաբար աստուծոյ վրայ տեղեկութիւն չունինք. Նայեանէն ետքը ամենէն ծանօթ դէմքն է Սահակ Աւագին, Կարնեցի եւ Առաջնորդ Կարնոյ, որ արկածալից կեանք մ'ունեցաւ Հայոց Կաթողիկոս ընտրուելէն ետքը. 3½ տարի Կարին մնաց. չկրցաւ օծուիլ եւ Կարնոյ Կարմիր վանքի տանիքին վրայ ըստ սովորութեան պտտած ատեն յանկարծ հիւանդացաւ ու 40 ժամուան մէջ վախճանեցաւ 1763 Փետր. 22. Շք. օր մը: Հետեւեալ օրը թաղուեցաւ Կարնոյ Մարիկու (= Ս. Լուսաւորիչ) վանքին բակը, Տաճարին հիւսիսային կողմը որուն շինութեան աշխատած էր: — Աւագին տիտղոսը ցարգ կը կարծուէր թէ իր անյնեայ, հայոց կազմուածքէն թելադրուած ըլլար. այնպէս որ